72. ՄՈՒԽՍԻՆ ՈՒ ՄՈԼԵՆ

Կէղնի, չէղնի մարդըմ ու կնիկըմ կէղնի։ Ավուր մեկ էգ մարդն դյուշյուրմիշ կէղնի, թե. «Ես պիտի էրթամ յէրուսաղեմ, էղնիմ մուխսի։ Ես հիտա խըտըր դոլվաթի տեր իմ, խըլխ զիմ տուն մատով կցուցուն, հ'ո՞րի պըտի չէրթամ էղնիմ մուխսի. շատ-շատ պրտի էրթա հըրիրմ՝ օսկի խարճրլըխ»։

Ըդ մարդն է, շատ բարի մարդմ՝ կէղնի։ Ուր կնիկ լե, ուր պես բարի ու հորորդի։ Ըդ մարդուն աստված բանի պակսութեն չթորկիր էր։

Ըդ մարդու դեղի մեչ մոլեմ՝ լէ կէղնի, էն լէ հմալ բարի կէղնի, հըմալ օր մարդն է։

Մարդն է, կէլնա զուր խորհուրդ ըդ մոլին թարիֆ կէնէ։

Կըսե.—Ես պըտի էրթամ էղնիմ մուխսի, ըմա ես զիմ էղածչէղած կթողիմ քու հիվով։ Վերև աստված, ներքև դու, էլ ուրիշ մարդու իհթիրար չըմ էնի։ Իլաի իմ կնկան շատ մուխյաթ մնաս։

Մոլեն լէ կըսե.—Ըպա հըմլա ժամանակ մ՝ օր զքու խաթըր կոտրիմ, էլ ի՞նչ ավուր մարդ իմ։ Իմ գլխուն, իմ աչըվնուն։ Իսկի հոգ մ'էնի։ էրթաս բարով, հ իգաս բարով։ Ես զքու կնկա պակասութեն ինչ օր էղնի զքու տուն-տեղի, ես կշարաշրվիմ հըրի հ'իգաս։

Մարդն օր զրդ հ'ըմեն թարիֆ էրեց մոլին, հ'էլավ էկավ ուր տուն։

Հ'իրկուն ինք ու ուր կնիկ մինակ նստան։ Ըսեց.—Կնի՛կ, դինա՞ս ես բանըմ դյուշյուրմիշ իմ էղի ու պըտի էնիմ լէ։ Մենք,

փա՜ռք ասու, բանի պակասութեն չունինք, աստված մրզի զրմեն բան տվիր է, հավու կաթ մինակ չկա մրր տուն։ Էլ հ՚ո՞րի ես պրտի չէղնիմ մուխսի, խրլխքը ղիս էլ հ՚էվելի՞ ին, վոլաի էլ չրմ կանի։ Դու ի՞նչ կրսես, կնի՛կ։

— Ըպա, դու օր էրթաս, ես չրմ թո՞ղի, ես լէ կուզիմ օր դու էղնիս մուխսի, հ՚ըմեն մարդ զքրղի մատով ցուցուն, ո՞ր զուր աչք քոռ կուղե, յա աստված, շուտով էրթաս, աստված ինչ օր բարի է, ղընի թրղ կատարե։

Ըդ մարդն էր, մրկէլ օր զուր թադարուք տեսավ։ Ուր կնիկ էփեց դաթա-մաթա, դրեց հիտ ու հ՚ընկավ ճամբա։ Երուսաղեմ հ՚ո՞ւր իս՝ էկա քե։ Մարդ թրղ էրթա ուր ճամբով, մենք դառնանք վրր կնկան։

Կնիկն էր, օր մարդը գնաց հեռեցավ, հ՚էլավ ղտան դուռ փակեց, ղփանճարեք դրեց, սև քաշեց վրեն ու ըսեց. «Հըրի իմ մարդ չիգա, էլ զդուռ չրանամ ու դուրս չէլնամ»։ Զյումքի ըդ կնիկ շատ նամուսով կնիկ էր։ Զուր հ՚ըմեն պատրաստութեն տեսավ, փակեց ղդուռը ու նստավ տան մեշ։

Ըդրա վրրա հ՚ընցավ ամիս մ՚, էրկու ամիս, օր մ՚ լէ հ՚ընկավ մոլի միտք, օր ուր բարեկամ ուրեն բան թանբիհ էրեց։

Լուսուն օր էղավ, մոլեն հ՚էլավ գնաց ըդ մարդու տունրվե, ըսից. «էրթամ տեսնամ, բալքիմ պակասութեն մը կէղնի ուր կընկան»։ Ըդրա հ՚աբով գնաց զրրկեց զրդ մարդու դուռ։ Շատ, քիչ զրրկեց, մեկ լէ տեսավ կնիկրմ փանճարից պոռաց, ըսեց.—Հ՚ո՞րի զդուռ կզրրկիս, քրզի ի՞նչ գործ կա մրր հետ։

Ըսեց.—Քու մարդն օր ըստեղից գնաց, թամբի էրեց ընձի, օր իմ աչք ձրր վրեն էղնի, մարդ բանրմ ձրզի չրսե, հրրի օր դա քու իրիկ։

Ըդ կնիկ շատ խորոտիկ էր։ Մոլեն օր տեսավ զրդրա խորոտկութեն, սիրտ փոխվավ, ըդ հաղ շատ յալվար էղավ օր զդուռ բանա։

Ըդ կնիկն օր հ՚էրդում էրեր էր, օր զդուռ չբանա, ըսեց.—Զէ. ըդ բան չէղնի, հ՚էրգում էրեր իմ օր մարդու դուռ չբանամ, հրրի իմ մարդ հ՚իգա, հրրի հ՚իրկուն լէ բագլիս, չէղնի ըդ բան։

Մոլեն չարեն կտրած թողեց, գնաց ուր տուն։

Մոլեն գիշեր ու ցերեկ կհալեր ու կմաշեր։ Օր բը զօր հ՚ետ կէրթեր։ Օր մը լէ. «Հըմլա չէղնի,—ըսեց,—չարեմ՝ պետք է գրտնամ»։

Մոլեն էր, հ'էլավ գնաց, պառապըմ գտավ քաղքի մեջ, զըմեն բան թարիֆ էրեց պառվուն.—Դու գինաս,—ըսեց մոլեն,—զըդ բան օր կատարիս, ինչ հ'ուզիս, կիտամ։

— Հըմալէ,—ըսեց պառապ—տուր բուռըմ օսկի, ես զքըղի քու մուրատին կհասում։ Ջօսկիք զըմեն լէ ընձի չըմ առնի, շատ փայլին ըդրա համար կխարճիմ, պակասութեն-մակասութեն ինչ օր էղնի, կառնիմ։

Մոլեն զփարեն տվեց ու թողեց գնաց ուր տուն։

Պառապն էր, լուսուն օր էղավ, հ'էլավ գնաց ըդ կնկա դուռ, զըրկեց զդուռ, կնիկ զգլուխ թալեց փանճարենըվե իշեց։

— Քու տուն շինվի, հըմա զդուռ բաց, հ'իդում ներս, ըդ ի՞նչ է էղի, ըդ հ'որի ըսկի դուրս չըս հ'էլնա, քոռնենք ես, ըդ ի՞նչ հալու մեջն իս հ'ընկե, բաց զդուռ, հըմա իսկի չէ՝ կուժըմ ջուր բերիմ խմիս։ Վա՜խ, վա՜խ, ըդ ի՞նչ հալ է։

Կնիկն էր, ավտրցավ ըդրա խոսքերուն, հ'էլավ զդուռ բացեց, զպառապ տարավ ներս, նստրցուց։

— Իմ աչք քոռներ, ես խապար չունենք, թե քու մարդ գացեր է մուխսի կէղնի, ըդ ի՞նչ հալու մեջն իս հ'ընկի։ Ձքու շորեր հազրէ, կտանիմ լվամ, դու լէ հազրվի, վաղ կտանիմ համամ խորոտիկըմ կլողկըցում, բերիմ զքի։ Ես խաբար չունեք, թը չէ՝ հ'ըմեն օր կիգենք կէրթենք։

Հ'էլավ գնաց կուժըմ ջուր լէ բերեց, առավ զշորեր գնաց օր լվանա։

Կնիկ գենա զդուռ փակեց, մտավ ներս։

Պառապ հըմա շուտ մէ շուտ հ'էլավ գնաց մոլի տուն, զըմեն խըսա էրեց մոլին, մոլեն լէ շատ խնտացավ։

Պառապն ըսեց մոլին.—Հընտե վաղ զկինկ կբերիմ համամ։ Հըմալ իմ համուզի, դու լուսուն օր էղավ, հ'էլի շուտ էկո իմ խեչ, դու դարդ մ'էնի, հընտե ես զըմեն բան կշինիմ։

Մոլեն շնոխկլավ պառվուց, պառապ լէ գենա դարցավ էկավ ուր տուն։

Մոլեն էր, էլ քուն չըր հ'իգե, շան հալով լուսցուց, լուս օր հ'էլավ, շուտ մէ շուտ վազեց, գնաց պառվու տուն։

Պառապն առավ զմոլեն, գնաց համամ, խորոտիկ մէ պատըվցուց գողտուկ տեղըմ ու ըսեց.—Հընտե ես կէրթամ զկնիկ կբերիմ հ'ոդա։ օր բերեցի զուր հալվըներ կհանիմ, պահիմ տեղըմ, զինք

լէ կբերիմ ջրի հ՝առջև ու դողտուկ կթողիմ կէրթամ դուրս, ըդ հաղ դու գինաս, իմալ կէնիս էրե։

Մոլեն շնոխկլավ պառվուց։ Պառապն հ՝էլավ գնաց գենա զրկեց ղկնկա դուռ, կնիկ զգլուխ թալեց փանճարենըվե, տեսավ օր պառապն է, վազեց շուտ մէ շուտ զդուռ բացեց։

Պառապ ըսեց.—Դե՛, քելե էրթանք, հ՝անգան է։

Առավ զկնկա չամաշուրներ, հ՝ընկավ կնկա հ՝առջևն ու գացին համամ։ Հանեց ղկնկա հալվըներ, դրեց մեկ դին, տարավ ջրի հ՝առջև ու ըսեց.—Դու լողկըցի, հըրի ես հ՝իգամ,—ու թողեց գնաց։

Կնիկ դհա ջուր լըցեր էր, չըլըցի վրեն, մեկ լէ տեսավ ըդ մոլեն օր զուր դուռ զըրկեր էր, կանավ ուր հ՝առջև տկլոզ ու չըփլախ։

Կնիկ քըվրեց զմոլեն օր հեռենա ըդ տեղեն, ախըր չէղավ։

— Չէ՛, պըտի հ՝իգաս հըմլա բանըմ էնիս իմ հետ։

Հըրի ինչ չարի չուրի էրեց, չէղավ։

Կնիկ տեսավ օր ճար չկա, էլ չկռնա փրծնա ըդրա ճանկից, ըսեց.—Դե՛հ, հըմալէ, էկո դու լողկըցի, սերսըփի օր զքու խոսք էնիմ, թը չէ՝. չէղնի։

Մոլեն էր, խնդանալուց հըմա վազեց նստավ ջրի հ՝առջև։ Կնիկ բերեց ջուր լցեց գլխուն, առավ սապոն ու քսեց վըր գըլխուն, քսեց ու փըրփըրցուց, քսեց քիթ բերնի վրեն ու աչքերն ու էնեց զըմեն սապոն, տեսավ օր էլ մոլեն զաչքեր չկռնա բանա, կմռմռա, զթաս դրեց փեշտմալի մեջ ու տեկո մոլի գըլխուն զըր հա զըր, զըր հա զըր, մոլի ուշք հ՝ընցավ, պատավ գետին, կնիկն հըմա թողեց գնաց զուր հալվըներ հագավ ու հըմա գնաց ուր տուն, զդուռ փակեց, հ՝էրդում էնեց՝ էլ չբանա, հըրի ուր մարդն հ՝իգա։

Թե ինչ խըտըր կմնա մոլի ուշքն հ՝ընցուք, ասված գինա, կիմնա, կտեսնա, օր աչքեր կմռմռա, կըլնա ջուր, կլվա, կհագնի զուր հալվըներ ու կէրթա մտնա ուր տուն։

Ըդրա վրեն կընցնա ժում ու ժամանակըմ։

Ըդ կնկա մարդ կէրթա Երուսաղեմ, կէղնի մուխսի ու կդառնա, օր կիգա կհասնի ավուրըմ խոնախ հեռու, կըսե՝ «Կանե գիրըմ գրիմ իմ մոլին, թե ես հընդե էկա»։ Կէլնա թուղթ կգրե ճամբըցու մոլին։ Մոլեն կառնե զթուղթ կարդա, շատ կխնդանա, հըմա կըսե. «Կանե զիմ հայիֆ հանիմ ըդ կնկնուց»։

Ինք լէ ըդ տեղեն կէլնա ուրիշ թուղթըմ կդրե մարդուն, թե «Ի՞նչ կհարցուս՝ հա՞լ ու քեֆիա՞թ հըմլա բանըմ կա, էն օրվընե օր դու գացիր իս, քու տան դռներ հ՝ըմնու հ՝առջև բաց է էղի։ Մեկ դռնեն կմտնեն, մեկէլ՝ կէլնեն»։

Կըտանին զըդ թուղթ կհասուն մարդուն։ Մարդ կիշե՝ հը՞, հըմլա բան լէ կա, հա ու ըդ տեղեն զուր միտք կփոխե կնկա վըրեն։ «Հըրի մըկա ես ղինենք իմ կնկա պես չըկեր, հըմա ես խաբվիր իմ»։ Մարդն է, հ՝ըմն օր մարախ կէնե, թե ըդ ի՞նչ բան էր էղավ, էդ լէ պետք էր ուրեն։ Օրըմ կմնա, մեկէլ օր կմընա ուր քաղքի մեջ, կիզա կէրթա ուր տան դուռ, կղըրկե զդուռ։ Կնիկ զգլուխ կթալե փանճարենըվե, կիշե օր ուր մարդն է էկի, կխնդանա, կվաղե զդուռ կբանա, կբարովե զուր մարդ։ Կնկա իրիկ շատ խելոք կէղնի, իսկի բանըմ չըսե ուր կնկան, հըմալ կէնե օր կնիկ չախլի։

Կընցնա ժում ու ժամանակըմ, օրմ՝ լէ կկանչե զուր թըժա վարձուկ մշակ, կըսե.—Կառնիս զիմ կնիկ, կտանիս անվերի սարում գլուխ, կմորթիս, զուր շապիկ կթաթըխիս ուր արնի մեջ, կըբերիս ցուցուս ընձի օր ավտընամ, թե՝ հա, օղորդ սպաներ իս։

Մշակ հ՝առջի հաղ կամք չիտա, հ՝եբօր ուր աղեն քընիմ՝ օսկի կիտա, ինք լէ ըս անդամ կամք կիտա օր տանե մորթե։

Մշակն է, կառնե զըդ մարդու կնիկն ու կէրթա։ Շատ ու քիչ կէրթա, կնիկ կհարցու մըշկուց, կըսե.—Զիս հ՝ո՞ւր է կտանիս։

Կըսե.—Կէրթանք հե՞ ինա սարու գլուխ։

Կըսե.—Հ՝որի՞ կէրթանք։

Կըսե.—Քըզի ի՞նչ, հըլպըթ բանիմ՝ համար կէրթանք։

Կնիկ շատ յալվար կէղնի մշկուն, մշակ լէ կէլնա զըմեն բան թարիֆ կէնե կնկան։

— Է հըմալ է,—կըսե կնիկ,—հ՝ո՞րի կընկնաս իմ մեղքի տակ, կիտամ զիմ հալվըներ քըզի, քանիմ՝ փարա լէ կա իմ խեչ, զէն լէ կիտամ քըզի, թող էրթամ իմ արևուն արև էնիմ։

— Չէ՞, չէ՞,—կըսե մշակ,—իմ աղեն նշան կուզի, պետք է տանիմ ցուցում՝ օր ավտընա։

— Ի՞նչ է ըդ նշան,—կըսե կնիկ։

Կըսե.—Զքու շապիկ պետք է թանթըխիմ քու արնի մեջ, տանիմ ցուցում։

— Ըդի ըոհաթ բան է, ըն փարեն օր ես կիտամ, ընդըրնե տուր

քընիմ՝ փարա, սու ուլըմ, մորթե, զիմ շապիկ թանթըխե մեջ, տար ցուցու։

Մշկու սրտի մեջ գութ կընկնա, կէլնա ուլըմ կառնե, կմորթե, կրերե ղկնկա շապիկ կթանթըխե մեջ ու կդառնա կիդա աղի տուն։

Մարդ շապիկն օր կտեսնա արնոտ, նոր կավտընա։

Ըդի թըղ մնա ըդ տեղ, մենք դառնանք վըր կնկան։

Կնիկն է, ըդ տեղեն մինակ կընկնա ճամրախ ու կէրթա։ Կէրթա, կէրթա, շատ ու քիչ ասված մինակ գինա, կէրթա կհասնի թագավորիմ՝ քաղքի կուշտ։ Ըդ տեղ կտեսնա հ՝աղբուրըմ կա, կխմե ջուր ու կքաշվի կէլնա հ՝աղբրի կշտի ծառու վրա կնստի ու կիշե զքաղաք։ Ուր վրեն լէ մենակ անթարիմ՝ կէղնի հագուկ։

Ըդ քաղքի թագավորի սեիսներ լէ հ՝ըմն օր ըդ հ՝աղբրի վըրեն կբերեն ղթագավորի ձիանք ջուր կիրմցուն։ Ըդ օր լէ օր կբերեն, ձիանք կխրտին ու հ՝ետ-հետ կքաշվին. ինչ խրտըր կմոտենան, ախըր չէղնի, ջուր չըն խմի, հրմա հ՝ետ կքաշվին, չումքի զաղջըկա շուք օր կտեսնան հ՝ազբրի մեջ, էլ չըն մոտենա։

Քանիմ՝ օր ըդհրմալ կընցնա։

Օրմ՝ լէ թագավորի տղեն կէրթա մտնա խան, կտեսնա զձիան օր քաշվեր ին, կհարցու սեիսներուց, թե՝ հ՝ո՞րի հրմլա քաշվիր ին ձիանք։

Կըսեն.—Վոլայի, ըն խրտըր գինանք օր հիտա քընի օր ջրի վրեն կտանինք, ջուր չըն խմի։

Կըսե.—Շատ աղեկ, հ՝ըսօր լէ օր քաշեցիք վըր ջրին, զիս լէ կանչեք։

Թագավորի տղեն կէրթա սարեն։

Ձիան ջրելու վախտ օր կէղնի, սեիս բաշին կէրթա կկանչե, ղթագավորի տղեն լէ ու կքաշին զձիանք վըր ջրին։ Կտանին վըր հ՝աղբրին, քանի կմոտեցուն՝ կխուտին։

Թագավորի տղեն կմոտենա հ՝աղբրին, կիշե մեջ, որ կիշե մեջ, խորոտիկ սուրիաթըմ կտեսնա ջրի մեջ։ Կդառնա ծառու վըրեն, կիշե օր խորոտիկ աղչիկըմ նստուկ ծառու ծեր։ Կբոռա, կըսե.—Աղջի՛, ցոտ էկո, թըղ ձիանք ջուր խմին։

Աղչիկ չխոսա, զինք էրեր է կուլթեն ու լալութեն։ Հըրի ին; կէնե, չէղնի, աղչիկ չիջնա ծառուց։

Կնիկ շատ խորոտիկ կէղնի։ Թագավորի տղեն լէ կարգուկ չէղնի, սիրտ կբռնե զըդ կնիկ, կըսե. «Վոլայի, էղնի, չէղնի էդ է իմ»։ Ըդրա համար չխիմիշնա բան ըսե կնկան։ Կթողե կէրթա։

Թագավորի տղեն հալ ու մաշ կէղներ կնկա դարգեն։

Ըսդեն-ընդեն շատ օլորղավ, վերջապես գտավ պառապըմ-զուր դարդ թարիֆ էրեց ըդ պառվուն, ըսեց.—Օր իմ դարդին դարման էնիս, քըզի բուռըմ օսկի կիտամ։

— Իմ դլխուն, իմ աչըվնուն, դու իսկի դարդ մէնի, ըդի հասավ ընձի։ Հընտե ես կէրթամ չարսուն, կգնիմ մաղըմ չամիչ, դու լէ քընիմ մարդ առ քու հետ, էկո հ'աղբրի խեչ պատըվտի, հընդե հ'եբոր ես ձեն տվի, դու շուտ էկեք։ Լուսուն օր էղավ, կառնես զմարդիկ, կիգաս հ'ոդա, հ'իրարու հետ կէրթանք։

Թագավորի տղեն հ'էլավ ըդ տեղեն, գնաց, մնաց հըրի լուս։ Լուսուն էր էղավ, Թագավորի տղեն առավ քընիմ՝ մարդ, գնաց պառվու տուն, պառապ լէ առավ զչամիչ, լըցեց մաղի մեջ ու գացին։

Թագավորի տղեն ու ուր հետի մարդիկ հ'աղբրից հեռու կըպատըվտին, պառապ լէ առավ զմաղ չամիչ, գնաց հ'աղբրի վըբեն։ Դրեց զմաղ դետին, լըցեց զչամիչ ուրիշ տեղըմ ու լվաց, հ'եբոր զչամիչ լվաց թըմավ, ըդ հաղ ճանկ-ճանկ կըլնա մեջ մաղին, հըմա խըստու մաղի մեջ չըր հ'ըլնե, կուշտ կթափեր։ Քընիմ՝ հաղ օր ըդ հըմալ էրեց, կնիկ ծառու ծիրուց պոռաց.—Դադե, դադե, մաղի մեջ լից, հ'որի՞ կուշտ կըլնաս։

Պառապ կըսե.—Քա մեռնիմ քըզի, դու հ'ո՞ւր իս, հըմա էկո օգնե ընձի։

Կնկա սիրտ կցավա, կիջնա կիգա, կօգնե պառվուն։

Պառապ կբռնե ղկնկա ձեռք ու կպոռա.—Էկեք, բռներ իմ։

Թագավորի տղեն ու ըդ մեկէլ մարդիկ կէլնան կիգան, կբռնին զկնիկ, կտանին Թագավորի սարեն։

Թագավորի տղեն կըսե.— Էղնի, չէղնի հիդա է իմ,— ու կէրթա ուր պապուն կխոսա, թե՝ հըմլա բանըմ կա։

Թագավոր լէ կըսե.—Լաո՛, օր հըմալ է, կանչիմ զիմ մեծամեծներ թըղ հ'իգան դիվան, ընտոնց լէ խոսամ օր հարսնքի թադարուք տեսնանք։ Մեկ լէ ո՞ր դինա ըդ աղչիկ հ'ո՞ւստեն է, հ'ո՞ւստեն չէ, իմա՞լ հորորդի է, պետք է հ'իմնանք զըդ հ'ըմեն ու պաշլայենք մըր գործուն։

Տղեն լէ կըսե.—Ըդ աղչիկ իմալ էղնի-չէղնի զըդի բըտի առնիմ, դու մինակ հարսնքի թադարուք տես։

Թագավորն է, կէլնա, կանչե զուր սադրազամն ու մեկէլ մե-

ժամեծներ, կնստին դիվան, թագավոր կըսե, թե.—Հըմլա բանըմ կա, ըտոր համար ղձըզի կանչիր իմ հ'ոդա։

Ըդոք լէ կըսին.—Թագավոր ապրած կենա, մենք ի՞նչ պըտի ըսինք. մինակ թե՝ աղչիկ հ'ուստե՞ն է, հ'ուստե՞ն չէ, վի՞ր տղչիկն է, հ'ո՞րի մըր քաղքի մեջ չկա՞ հըմալ աղչիկըմ, օր քու տղի խարճըն էղնի։

Կըսե թագավոր.—Ջըդ հ'ըմեն իմ տղին ըսեցի, ուր գլուխ չըմտավ, ըսեց. «էղնի՝ էդ է, չէղնի՝ էդ է»։

— Է՛, դե օր հըմալ է, հարսնքի թադարուք տեսնանք ու պըսակինք վիրարու։

Թագավորն էր, հ'էլավ ուր գորա թադարուք տեսավ, կանչեց զմեծամեծներ, քեֆ էրին։ Ըդ հաղ բերին ղտղեն ու զըդ տղչիկ պսակին հ'իրարու վրեն։ Յոթն օր, յոթ գիշեր դհոլ ու զուռնա զըրկին, ուրախցան։ Հարսնիք օր թըմավ, հ'ըմեն մարդ քաշվավ գնաց ուր տոն։

Ըդրա վրեն հ'ընցավ ժամ ու ժամանակըմ, թագավորի տղին էղավ էրկու տղա։ Թագավոր շատ խնդացավ օր ուր տղին զավակ էղավ։՝ Հըմա թագավորի տղեն շատ տրտում էր, իսկի չըր խընդանե, չումքի ուր կնիկ լալ էր, չըր կըռնե խոսե։ Դոխթոր չմնաց օր թագավորի տղեն չգնաց ուրանց մոտ, ախըր չկրցան բանըմ էնին։

Պառավըմ լսեց, ըն պառավն օր զչտմիչ լվտց, գնաց թագավորի տղի խեչ, ըսեց.—Ես քու դարդին դարմանըմ կէնիմ, ի՞նչ կիտաս ընձի։

— Ինչ օր քու բերան շուռ էկավ, կիտամ։

Կըսե.—Հըմալ է, առ խնձորըմ, տար, տուր քու մեկ տղին, մեկէլի մոտ՝ մի տա։ Հընտե քու էրկու տղեն զիրար կծեծին խընձորի վրեն, դու լէ պատըվտի փեթկի հ'ետև։ Տղեկներ օր զիրար ծեծին, ուրանց մամ հըլպըթի կիգա կփրծու հ'իրարուց օր փրծուց, հընտե կանիծե զքեզի լէ։

Իմալ օր թարիֆ էրեց պառապն, թագավորի տղեն լէ գնաց ու հըմալ էրեց, ինքն լէ պատըվտավ փեթկի հ'ետև, բաքլայեց, թե իմա՞լ կէղնի։

Ըդ էրկու տղեն էն խնձորի վրեն պաշլայեցին զիրար քաշկըռնել։ Ուրանց մամ էկավ պարուշցուց, առավ զխնձոր, էրեց էրկու տեղով, տվեց ամեկուն փըշում՝, ըսեց.—Կոտրի ձըր պապու ձեռք, փարա չկե՞ր օր էրկու հատ առներ։

Հրմա ըդ խոսելուն, թագավորի տղեն վազեց էկավ բռնեց ղկնկա ձեռք ու ըսեց.—Ըպա լեզու օր ուներ հրրի հ'ըսօր հ'ո՞րի. չըր խոսե, պապանծեր էր, ի՞նչ էր էղի։

— Հ'որի՞ խոսենք, դու օր հրմալ զարդարութեն չխոսաս, հ'ըն օր օր ղիս ծառու ծիրուց հ'իջուցիր, հ'ո՞րի չհարցրցիր, թե դու կարգո՞ւկ իս, կարգո՞ւկ չիս, իմա՞լ իս, վի՞ր ախչիկն իս, հ'ուստե՞ն իս, հո՞րին իս էկի հասի հ'ոդա տեղրանք, հըլրաթ քըզի ի՞նչ դարդ կա, ղրդ հ'ըմեն պետք էր դու հարցներ իմ մոտեն ու գիտներ։ Դու թագավորիմ՝ տղա էր, հ'էլար առանց գինալու, թե ես վի՞ր աղչիկն իմ, զորով առար զիս, ըդոր համար ես լէ էլ չընք խոսե։

Թագավորի տղեն շուտ մէ շուտ վազեց գնաց ուր պապու խեչ, զըմեն բան ըսեց, թե,—Իմ կնիկ լէ լեզու հ'էլավ։

Թագավոր լէ կանչեց գենա ղուր սատրազամն ու զմեծամեծներ, թըժա քեֆ էրին ըդրա վրեն։

Քընիմ՝ օր հ'ընցավ, տղի կնիկ ըսից իրկան.—Իզին տուր ընձի քընիմ՝ օր էրթամ զիմ պապ, զիմ մամ տեսնամ ու հ'իգամ։

Կըսե.—Օր հրմալ է, ըսիմ իմ պապուն՝ թըղ թադարուք տեսնա, ճամբըցու էրթաս։

Կէլնա կէրթա ուր պապու խեչ։ Կըսե թե.—Հրմլա բանըմ կա, ըդոր համար էկեր իմ քու խեչ օր իզին իտաս իմ կնկան, էրթա ուր պապու տուն, տեսնա զուր պապ ու մամ։

Կըսե.—Օր հրմալ է, լաո՛, հ'էլնաք թադարուք տեսնանք, կանչինք վոզիրրմ լէ դնինք ասկըրով, թըղ էրթա մեկ-էրկու ամիս մնա ու հ'իգա։

Թագավոր կկանչե վոզիր, կըսե.—Զիմ հարս կճամբըցում կէրթա ուր պապու տուն, թադարուք տես, դու լէ երկու բուլուկ ասկար առ քու հետ, կէրթաք հրրի հարսի պապու քաղաք, նոր կըդառնաք կիգաք։

Վոզիր գլուխ կիտա թագավորին, սարից կէլնա, կէրթա զուր թադարուք կտեսնա։

Քընիմ՝ օր զթադարուք կտեսնան, թագավոր կկանչե զուր տղեն, կըսե.—Լաո՛, զըմեն բան տեսեր իմ, բանի պակսութեն չմանցիր է, դիր զհարս ճամբու, թըխ էրթա. վոզիր լէ կանչեր իմ, թանբիհ էրեր իմ՝, օր հրրի հարսի պապու քաղաք էրթա, նոր դառնա՝ հ'իգա։

Թագավորի տղեն կշնոխկլի ուր պապուց, օր ըղ հըմալ շատ թագարուք տեսավ։

Թագավորի տղեն կկանչե զվոզիր օր առնե զասկար հ'իդա, էրթան։

Վոզիր կէրթա կառնե էրկու պոլուկ ասկար, կիդա թագավորի տղի սարի դուռ կրագլե։

Կհանին ղհարս կհեսցուն բոզ ձիում՝ վրեն, կտանին քաղքից դուրս, կդնին ճամբու ու ուրանք կդառնան։

Հարս զուր էրկու տղեն լէ ուր հետ կտանե։

Շատ, քիչ կէրթան, զընի ասված զինա, հ'իրկում՝ կհասնին դիտում՝ կուշտ, ղշադրրներ կզարկին ըդտեղ։

Վոզիր կվազե օր ղհարս հ'իջու ձիուց, կգրկե, ցած կբերե, քամին կղրրկե զքողք կվերցու հարսի դլխուց, իրես կբացվի, վոդիր կտեսնա։ Վոզիր օր կտեսնա հարս շատ խորոտիկ է, հըմա ըդ տեղ ուր սիրտ կփոխվի. շնութենի վրեն կէրթա։ Կբերին զքողք գենա կթալին վըր գլխուն, կտանին ուր շադրր կնստըցուն, զճրժեր լէ կտնին ուր խեչ։ Ուրանք լէ կթողին կէրթան ամեկ ուրանց շադրր կէրթան։

Վոզիրն է, հըմա կուզե օր հ'իրկուն շուտ հ'իգա օր զուր շնութեն էնե։ Կմնա հըրի հ'իրկուն, կմթնի, ամեկ ուրանց կքնին։ Գիշեր օր կէղնի, վոզիր կէլնա կէրթա կմտնա հարսի շադրր։

Կըսե.—Թագավոր ղքըզի թասլիմ էրեց ընձի օր սալամաթ տանիմ հասում քու պապու քաղաք, բանի պակասութեն չթողիմ էղնի։ Հըմա մուսատա կէնիս, ըս քընի օր ճամբախ կիգանք, իսկի չըմ հարցու, թե իմա՞լ իս, իմա՞լ չիս։

Կըսե.—Շատ աղեկ իմ, գնա քու շադրր քըզի պառկի։

Վոզրրի օտներ չբըռնե օր էրթա, կուզե զուր շնութեն հ'իմցու հարսին, հըմա հ'էրսեն չբռնե մեկէնիմեկ ըսե։

— Դե՛ գնա,—կըսե,—հ'ո՞րի կանար։

Կըսե.—Հըմլա բանըմ էնիս իմ հետ։

Կըսե.—Ամոթ է քըզի, հաղմ՝ լէ հըմալ բան չըսիս, գնա պառկի, հըմալ վադա էղնի մարդու չըսիմ։

— Չէ՛, չէղնի, պըտ էնիս։

Կըսե.—Թե էդա լէ էրկու հաղ կըսիս, կըսիմ քըզի՝ գնա քու շադրր պառկի, ամոթ է, հըմալ վադա էղնի իմ ղանին օր մարդու բերան չբանամ, չըսիմ։

— Չէ՛, զիմ խոսք կէնիս, էն հընտե զքու տղեն կմորթիմ,—

ղձեռք կթալե, զպզտի տղեն կվերցու ճղորեն, կըսե.—Կընի՞ս, թե՞ չէ։

Կըսե.—Կուզիս մորթե լէ, ըդի չէղնի ու չէղնի։ Ես կըսիմ, էկո քու խոսքից վաղ կեցի։

Վոզիր զպզտիկ տղեն կմորթե, կթալե մեկ դին։ Կվերցու ըստհաղ զմեկէլ տղեն, կըսե.—Էկո՛, անխելքութեն մ'էնի, իշե. հընտե գիդա լէ կմորթիմ։

Կըսե.—Կուզիս զէդ լէ մորթե, ըդ բան չէղնի ու չէղնի։ Կըսիմ քըզի մ'էնի՛։ Գնա պառկի, քըզի վադա իմ ջանին էղնի օր մարդու չըսիմ, տղեն լէ կըսիմ՝ մեռավ։

— Չէ՛, չէ՛, յա՛ն կէնիս, յան հընդե մորթեցի։

Կըսե.—Կուզիս մորթե, ըդ բան չէղնի՛։

Վոզիր զըդ տղի դլուխ լէ կկտրե, թալե մեկէլ դին։

Կըսե.—Կէնի՞ս, թե չէ՝ զքըզի լէ կսպանիմ,—կքաշե զթուր, կանի կնկա հ'առջև։

Կնիկ կտեսնա օր զինք լէ պիտի սպանե, կըսե՝ կանե խարդախութենմ՝ էնիմ։ Կըսե.—Դե օր հըմալ է, ընձի սովորութենըմ կա, ըն հազ օր մարդու ջուլ էրթամ, ես կլողկնամ, կսերսըբվիմ, նոր կէրթամ, թո՛ղ էրթամ հըդա գետ լողկնամ՝ նոր։

Կըսե.—Կէնիս հըմալ օր փախնի՞ս։

Կըսե.—Հ'որի՞ կփախնիմ, թալ ըղէդա շըրիդ, իմ օտք կտպե, դու լէ բռնե զմըկել ծեր, հըրի ես հ'իդամ։

Վոզիր կբերե զշրիդ զմեկ գլուխ կկապե կնկա օտք, զմեկէլ գլուխ լէ ինք կբռնե։

Կնիկն է, կէրթա, գիտու կուշտ, կհարցրկե զշվան, կկապե բուլըմ ու ըդ տեղեն կէրթա։

Կէրթա շատ ու քիչ, հ'ըռաստ կիգա հովըվիմ՝, կիտա բուտըմ օսկի, կառնե ուլըմ, կմորթե, զմիս կիտա գենա հովըվին, մինակ զփոր կվերցու, զուր թաժա հալվըներ լէ կիտա հովըվին, կառնե կտրտուկ անթարիմ՝ ու թունբամ՝ կհագնի, զփոր լէ կլվա, կշինե զաշըվնու, զքթի, զբերնի տեղրանք, կիշու գլուխ, կփոխվի ու կհ'ընկնա, ճամբախ կէրթա։ Կէրթա, կէրթա՝ կհասնի ուր հ'առջի իրկա քաղաք. կէրթա կնստի հ'աղբրի վրեն։ Հաղըմ՝ լէ կիշե օր ուր իրիկ կուժ ձեռք կիգա հ'աղբուր։ Ինք կճանչնա զուր իրիկ, հըմա իրիկ չճանչնա զինք։

Մարդն օր կիգա կհասնի հ'աղբրի խեչ, կվազե զկուժ կառնե մոտեն, կըլնա ջուր, կիտա մոտ։

Կրսե.—Ձիս չը՞ս էնի քըզի խըզմաթքար։

Կրսե.—Լաո՛, ըպա դու օր հ՚իգաս, հ՚որի՞ չըմ էնի, ընձի լէ խըզմաթքարըմ պետք է, դու աղեկ կերևաս. օր հ՚իգաս, կտանիմ։ —Կառնե, կտանի տուն։

Կնիկ չէ՞ տղի կէյիմ հագուկ է, դինա տղա է շատ կուզե։ Ըտ մարդ լէ հ՚երդում էրեր է օր չկարգվի։

Տղեն թըղ ըդ տեղ մնա խըզմաթքար, մենք դառնանք էրթանք վըր վոզիրին։

Վոզիրն է, կիշե, կիշե՝ չէ կնիկ չէկավ, կէլնա կբռնե զչվան ու կէրթա, կէրթա, կիշե օր չվնի ծեր հընտե կապուկ բլին ու կնիկ չկա։

— Հը՛յ վա՛խ,—կրսե,—վոլաի խաբեց զիս, փախավ։

Հ՚ոդա կիշե, հ՚ոնա կիշե, մարդ չկա, կդառնա կիգա։ Կէրթա կմտնա ուր չտղըր կպառկի։ է, իսկի վոզիրն էլ քո՞ւն կիգա։ Կրաշ-լայի մտալա կէնե, հըրի կլուսնա։ Օր կլուսնա, խաստու շուտ չէլ-նա ուր տեղից։

Ասկըրներ հ՚ըմեն կէլնեն կիշին օր վոզիր դհա քնուկ է։ Մեկ չիշխընա հիմցու, կմնա հըրի ինք ուրեն կիմնա։ Կէլնա կհագնի զուր հալվըներ, կլվացվի։

Կրսե.—Դե, հազըրվեք էրթամ զհարս լէ հ՚իմցում, հ՚էլնանք էրթանք։

Կէրթա զչադրի դուռ կբանա օր ներս կիշե, հըմա կբաշլայի բոռբըռալ, թե. «Հարս փախիր է, զուր էրկու տղեկներ լէ մորթի թալի հ՚իտա տեղ ու փախի։ Էկե՛ք, էկե՛ք, իշեք»։

Ասկըրներ լէ կիգան կիշին օր օղորթմա՝ էրկու տղեն լէ մոր-թուք, արուն լըցվի իտտեղ, հարս լէ ըղտեղ չէ։

Վոզիր կրսե.—Հազըրվեք, հեծեք զձիան, էրթանք շուտ խա-բար իտանք թագավորին ու ուր տղին։

Կէլնան կհեծնան զձիան ու հմա կշիտկվին ուրանց թագավորի քաղաք։ Կէրթա վոզիր զմեն բան թարիֆ կէնե թագավորին ու ուր տղին։

Թագավոր կկանչե զուր սադրազամն ու զմեծամեծներ զմեն կրսե, թ՚ հըմլա բանըմ էղի։

Սադրազամ կրսե.—Ըպա ես չըսի՞ քըզի, թագավոր ապրած, թե ո՞ր դինա ըդի հ՚ուստե՞ն է, վի՞ր աղջիկն է, ի՞նչ ջալապ իսան է, ախը՞ր ընձի մտիկ չէրիք, հ՚էլաք հ՚ուզիք ձըր տղին։

Կըսե.—Ըպա ես ի՞նչ էնենք, չկրցա իմ աղի վրեն, ըսից. «էղ-նի՝ էդ է, չէղնի՝ էդ է»։

Թագավորի տղեն լէ հ՚ոդի էր նստուկ, ըսեց.—Օր հըմալ է, տուր պոլուկըմ ասքար, ես, վոզիր կէրթանք կօլորդինք, հըրի չդտնամ, էլ իմ օտք հ՚ոդա բըտի չիդա։

Թագավոր իլին տվեց ուր տղին։ Տղեն առավ զվոզիր, քանիմ՚ մեծ մարդ լէ ու պոլուկըմ ասկար, հ՚ընկան ճամբախ։

Շատ գացին, քիչ գացին, էկան հասան ըտ գիտուն, հ՚ուստեն կնիկ փախեր էր։ Հըրի ըդտեղ սալըխըմ առան։

Հ՚էլավ ղասկար հ՚ետ ճամբըցուց, ինք, վոզիր ու մըկէլ մարդիկ լէ ղուրանց խըլըխ փոխին ու գացին։

Գացին, գացին տեսան հովիվըմ։

Թագավորի տղեն ըսեց. «էրթամ հարցում էտա հովվից, կեալ ըդի չտեսի՞»։ Գնաց հարցուց, ըսից.—Հիդա հըմլա կնիկ չը՞ս տեսի։

Կըսե.—Վոլա, քանի մ՚օր կէնե, կնիկմ՚ էկավ, դիդա գնաց։ Ձուր հալվներ լէ փոխից իմ հալվներու հետ ու գնաց։

Կըսե.—Ի՞նչ իտամ քըզի օր զըդ հալվներ ըիրես՝ իշիմ։

Կըսե.—Դու դինաս, ինչ օր տվիր։

Կիտա քընիմ՚ օսկի, կէրթա կրերե զհալվներ, կիշե օր՝ օղորթմա ուր կնկա հալվներ է։

Կըսե.—Հո՞ւր վե գնաց։

Կըսե.—Հա՜, հըմլա.—Հովիվ կցուցու զճամբախ, կընկնան հըտ ըդ ճամբուն ու կէրթան։

Կէրթան, կէրթան կհասնին ըդ կնկա իրկա քաղքի կուշտ։ Կընստին քիչըմ կըհոգթին։ Թագավորի տղեն կըսե.—Հընտե կէրթանք քաղքի մեջ, տունըմ կէղնինք խոնախ։ ՁՀըր անկըշնիր սուր պահիք, իշեք, տեսեք զիմ կնկա բհաս իսկի չը՞ն էնի ըդ տեղրանք։

Քիչըմ կհոգատին ու կէլնան կէրթան քաղքի մեջ։

Ըդ վախտ մարդու խզմաթքարն կիգա հ՚աղբուր ջրի, կիշե օր ըն դիեն քընիմ՚ մարդ կիգան։ Հ՚տղբրին օր կմոտենան, կճանչնա զըդոնք, կըսե ինք ուրեն՝ «Հինա իմ իրիկն է, թագավորի տղեն, հինա լէ վոզիրն է»։

Կկանի ըստեղ, կիշե։

Ըդոք լէ կիգան-կիգան հ՚աղբրի վըրեն, բարև կիտան, կառնե զդոց բարև, ջուր կհըլնա կիտա ըդոնց, կխմին։

Կըսին.—Ախբե՛ր, մենք խարիպ ինք, հ՚ըսօր հ՚ո՞ւր էրթանք տեղավորինք։

Կըսե.—Կտեսնա՞ք հե հընա տուն։ Ըն տան տեր շատ աղեկ մարդ մ՚է, կէղնի օր զձըզի մսաֆըր առնե։ Ես լէ ուր տան խըզմաթքար իմ։

Ըդոնք կշնոխկլին տղից ու կէրթան ըդ մարդու տուն։ Կզըրկին զդուռ, մարդ կէլնա զդուռ կբանա, կիշե օր քընիմ՚ մարդ հընդին դուռ կանուկ։

Կըսե.—Ի՞նչ կուզիք։

Կըսին.—Մենք խարիպ ինք, հ՚ըսօր զմըզի մսաֆըր տոնի՛ս։

Կըսե.—Մըսաֆըր ասու մըսաֆրն է։ Էկեք ներս, քընի օր օր կուզեք, մանցեք, ըռհաթեք ձըզի, նոր էլեք դացեք։

Կտանե կնստըցու։ Կհանին զօտվընին, կլվան։ Խըզմաթքարն է, կիգա շուտ-շուտ խըզմաթ կէնե։ Իսկի բանիմ՚ պակասութեն չթորկե։ Կբերեն հաց-մաց, զատ կքաշին ըդոց հ՚առջև, կուտին, կթըմին, սուֆրեն գենա կվերցուն, կավլե զտախտ խզմաթքար։ Ըդոնք զարմանք կմնան, ըդ խըզմաթքարի վրեն օր հըմալ սըլուլ-արլուլ է, աչք բաց, չթողե հըրի աղեն բանըմ ըսե։

Հ՚իրկուն օր կէղնի, գողտուկ մարդ կճամբըցու մոլի տուն, կկանչե, թե աղեն կկանչե զքըզի՝ մսաֆըր էկեր ին, թըղ հ՚իգա ժըղըլցու քիչըմ։

Մոլեն հըմա շուտ մէ շուտ կէլնա կիգա, բարև կիտա մսաֆըրներուն, կէրթա վերին դին կնստի։

Ջճրագներ կկպուն, գենա հաց ու զատ կքաշին, կուտին, կխըմին, զսուֆրեն կվերցու խըզմաթքար, կավլե զտախտ, խահվա կբերե, կխմին։

Ժըզուլ կէնին, ամեկ բանըմ կխոսա։

Թագավորի տղեն լէ կվերու, կըսե.—Ասված սիրեք, հեքիաթ մ՚ի պատմեք, մտիկ էնինք քիչըմ։

Տան տեր լէ կըսե.—Հըմալ բաներ, թե մոլեն դինա ըսե։

Մոլեն լէ կըսե.—Վոյա, ախպըրտանք, ես չըմ գինա, օր գինենք կըսենք։

Խըզմաթքար էն դիեն կթըռնա կըսե.—Ես գինամ, իզին տվեք ես կըսիմ։

Աղեն ընդիեն կվերցու կըսե.—Դե կորի՛ դու ի՞նչ դինաս օր ըսիս։

Թագավորի աղեն կըսե.—Հալբաթ գինա օր կըսե իզին տվեք, թըղ ըսե։

Կըսե.—Ախբեր, իմ խելք բանըմ չկտրե ըդբրնե։

Կըսե.—Թողիք, վոլա շատ աղեկ հեքիաթ գինամ, կըսիմ։

— Է, օր ըդ հըմալ է,—կըսե,—մենք լէ մտիկ կէնինք։

— Հըմա իշե խորոտիկ պըտի ըսիմ։ Ընձի սովրուիք մը կա, հ'իբօր հեքիաթ կըսիմ, մարդ դուս չթորկիմ, օր հ'էլնա։ Որն օր կուզե, հըմկա թըղ հ'էլնա դրսու հաշիվ տեսնա ու հ'իդա նստի,—կըսե,—հա՞, մարդ դուս չէլնա։

— Չէ, օղորդ կըսե,—կըսե թագավորի տղեն,—որն օր կէլնա, մըկա թըղ հ'էլնա, հ'իդա։ Մարդ լէ չէլնա, թըղ ըսե։

— Դե օր հըմալ է, ես զդուռ կփակիմ, զբալնիք կդրկիմ գոտիս։

Կէլնա զդուռ կփակե խորոտիկմ, զբալնիք կդրկե գոտին, կիգա կնստի։

Կըսե.—Դե՛, անկաճ էրեք հընտե ես կկցիմ ղհեքիաթ։

Կէղնի, չէղնի մարդըմ ու կնիկըմ. ըդ մարդ կուզե էղնի մուխսի, կէլնա ղուր կնիկ թասլիմ կէնե մոլին ու ինք կէրթա Երուսաղեմ։ Մոլեն է, օրըմ կըսե՝ էրթամ իշիմ կնկան բանի պակասութեն չկա. գիկա զդուռ կդրկե, կնիկ փանճարից կիշե կըսե՝ հ'որի՞ կզըրկիս։ Մոլեն լէ կըսե՝ քու իրիկ օր զնաց, ըսեց՝ իմ կնիկ քըզի թասլիմ, էկեր իմ, ըշթե կհարցում, կյալո բանի պակասութեն չունի՞ս։ Հըմա մոլեն օր կիշե կնիկ խորոտիկ է, սիրտ ըդ դահուն կփոխվի շընութենի։ Կնիկ զդուռ չբանա։ Մոլեն կթողե կէրթա, կգտնա պառապըմ, կխոսա լէ հըմլա բանըմ կա, օր կատարիս, քըզի հ'իդա խըտըր օսկի կիտամ։ Պառապ լէ կիգա ինչ հալով խանդրրմիշ կէնե, կտանե համամ, պառապ կթողե գողտուկ կէլնա դուրս, կնիկ կհանե զհալվըներ, օր կպաշլայե լողկնալ, մոլեն տկլոզ կկանի հ'առշև, կըսե՝ էկո հըմլա բանըմ էրե։ Կնիկ ինչ կէնե, չէղնի, կըսե՝ դը հմալ է, էկո լողկրցում զքըզի՝ նոր։ Մոլեն կնստի, կնիկ կբերե ջուր կըլնա ու սապոն քսե գլխուն ու քըթին-բերնին-աչըվնուն, կդնե գթաս մըշ փեշտմալին ու կդնե հ'առշև դրրին զմոլեն։ Մոլի ուշք կընցնա, կպատի հ'ոդի։ Ինք թողե կէրթա ուր տուն։

Մոլեն օր նստուկ էր հ'ոդի, կիշէ օր ըդի ինքն է էրե զըդ բան, կըսե.—Կէցի կէլնամ դուրս կիգամ նոր։

— Չէ՛, չէղնի, մարդ դուրս չէլնա, իզին չկա։

— Օղորդ կըսե,—կըսին մըկէլտոնք,—մարդ դուս չէրթա, հըրի թըմի։

— Ժումըմ կընցնա, ըդ կնկա իրիկ կիգա, մոլեն կէլնա գիրըմ կճամրըցու թե՝ ըն օրվընե օր դու գացիր իս, քու տան էրկու դուռ է էղի, մեկ կմտնեն, մեկէլից՝ կէլնեն դուրս։ Մարդ կավտընա։

Տանտեր կիշե օր ըդ հըմալ բան մէ ուր գլուխն է հ'էլի, կըսե. —Տո, ի՞նչ խորոտիկ հեքիաթ կըսե։ Ըսե, ըսե մենք անկանճ կէնինք։ Մոլեն լէ հըմա հ'իրարու վրեն կըսե.

— Յաման, թողեք հ'էլնամ դուրս, ջրոեցի վրես։

— Չէ՛, չէղնի, իղին չկա,—կըսին։

— Կմնա ժումըմ, ըդ մարդ ղուր կնիկ թասլիմ կէնե մշկուն, օր տանե սպանե։ Կնիկ խանդրըմիշ կէնե ղմշակ, կիտա քընիմ՝ օսկի, էլ չսպանե, ղկնկա շապիկ կթանթրխե արնի մեջ, կրերե ցուցու մարդուն, մարդ լէ կավտընա օր սպաներ է։

— Վու դու ապրե՛ս, դե ըդ տեղեն էկո հ'ը,—կըսե տան տեր։

— Կնիկն է, ըդ տեղեն շատ ու քիչ կէրթա, կհասնի թագավորի քաղաք, կէրթա քաղքի կուշտ, հ'աղբրի վրեն ջուր կխմե ու կէլնա հ'աղբրի կշտի ծառու ծեր կնստի։ Թագավորի սեիսներ ձիանք կբերին վըր ջրին, ջուր խմցուն, ձիանք կխռտին, հ'ետ կփախնին։ Քընիմ՝ հաղ ըդ չէջիտ օր կէղնի, օրըմ, թագավորի տղեն կիջքե, օր ձիանք շատ քաշվեր ին, զայիվցեր ին, կըսե.—«Ըդ հ'ո՞րի ձիանք ղայիֆցեր ին»։ Կըսին. «Ի՞տա քյընի օր կտանինք վըր ջրին, չըն խմի»։ «Հըմալ է հըսօր ես կիգամ ձըր հետ»։ Եբօր կքաշին վըր ջրին, թագավորի տղեն լէ ուրանց հետ կէրթա։ Օղորդ օր, ինչ խըտըր կմոտեցուն՝ կխռտին։ Թագավորի տղեն կմոտենա կիշե օր խորոտիկ շուքըմ ջրի մեջն է, կդառնա կիշե վըր ծառուն օր ախչիկրմ նստուկ է ծառու ծեր, օր չուտես, չխմես, զինք իշիս։

Թագավորի տղեն իմալ կէնե, չկընա իջու ցած, պառապըմ կիգա խարդախությամբ կիջու, թագավորի տղեն կտանե զըդ կնիկ, կպսակվի հետ։

Թագավորի տղեն օր նստուկ էր անկաճ կէներ, կըսե.—Հ'ոնկուց էկո հա՞, կիշե՞ք ինչ խորոտ հեքիաթ կըսե, մըր խելք ըդ խըտըր բան չըր կտրե քեզնից։

— Կնիկ հ'առաջ զինք լալութեն կդնե, տղեն իմալ կէնե չխոսա։ Ժումըմ կընցնա, թագավորի տղին կէղնի էրկու տղա։ Ըդոնք էփեյի կմեծնան, օրըմ թագավորի տղեն խնձորըմ կառնե կտանե իտա տղիմ՝ ձեռք։ Ինք լէ կպատըվտի փեթկի հ'ետև։ Տղեկներ կը-

կրովին խնձորի վրեն, ուրանց մամ կհասնի կառնե զխնձոր, կէնե էրկու կտոր, ամեկուն կիտա կտորըմ, կըսե. «Կոտրի ձըր պապու ձեռք, թըղ էրկու խնձոր առներ, ամեկուդ մեկ-մեկ հատ»։ Թագավորի տղեն փեթկի հ'ետևեն կէլնա, կըսե. «Ըպա հըրի հ'ըսօր հ'ո՞ր ի չըր խոսե»։ Կըսե. «Ընդուր համար չընք խոսե օր դու առանց հ'իմնալու, թև ես հ'ուստե՞ն իմ, վի՞ր ազչիկն իմ, հ'էլար պսակվար իմ հետ»։ Թագավորի տղեն շատ կխնդանա օր ուր կնիկ լեզու է էլի։ Կնիկ իզին կուզե օր էրթա զուր պապ ու մամ տեսնա։ Թագավոր լէ իզին կիտա, կդընե զուր վոզիր հետ կճամբցու։

— Ջան, ջան, ես շատ կհավնիմ քու հեքըթին,—կըսե թագավորի տղեն,—կտրեք ղձըր ձեներ օր լսիմ։ Ըսե՛, ըսե՛, մարդ չխոսա։

— Կէրթան քընիմ՝ ավուր ճամբախ օր մ'լէ գետում՝ խեչ շադրներ կզարկին, գիշեր վոզիր կէլնա կէրթա կնկա շադրը, կըսե. «Հմլա բանըմ պըտի էնիս իմ հետ»։ Կնիկ խոսք չիտա։ Վոզիր կրոնա ղկնկա էրկու տղեն լէ կմորթե, ախըր կնիկ կըսե՝ չէղնի ու չէղնի։ Կնիկ երոր կիշե օր զինք լէ պիտի սպանե, կըսե. «Օր հըմալ է, էրթամ գետ լողկնամ՝ նոր»։

Վոզիր օր նստուկ էր ըդ տեղ անկաճ կէներ, կըսե.—Ցամա՞ն, շըռեցի վրես, թողեք հ'էլնամ դուրս, հ'իգամ։

Թագավորի տղեն չթողե, կըսե.—Չէ՛, իզին չկա։

— Վոզիր չըվնի ծեր կկապե կնկա օտք օր չփախնի, զմըկէլ ծեր լէ ինք կրոնե։ Կնիկ կէրթա գետու խեչ, կհարձրկե զչվան, կկապե բուլըմ ու կփախնի։ Վոզիրն է, շատ կիշե օր կնիկ չէկավ, կէլնա կէրթա հ'ետևեն, կիշե օր մարդ չկա ըդտեղ, չվան լէ կապուկ է բուլ։ Լուսուն կէլնա կդառնա թագավորի քաղաք, կէրթա սալըխ կիտա, թե՝ հարս գիշեր զուր էրկու տղեն սպաներ է ու փախե։

— Ցամա՞ն, շըռեցի վրես, թողեք հ'էլնամ դուս,—կըսե վոզիր։ Հը՞րի ինչ կէնե, չըն թողի։

— Թագավորի տղեն կէլնա կառնե զվոզիր ու քընիմ՝ հոգի լէ ուրիշ, կընկրնա կնկա հ'ետե։

—Է՛, դը պատմե տեսնանք ի՞մալ կէղնի,—կըսե թագավորի տղեն,—կգտնա թե՝ չէ։

Կիգա-կիգա ըռաստ կիգա հովվիմ՝, կհարցու թե՝ դիտա ըսկի մարդ չընցե՞ր է. կըսե. «Վոլտ՛, կնիկըմ էկավ իմ խեչ, առավ ուլըմ, մորթեց, մենակ զփոր վերցուց, զուր հալվըներ լէ տվեց ընձի, ա-

ռավ անթարիմ՝ ու թունպամ՝ հագավ ու գնաց։ Կըսե. «Ո՞ր մեկ ճամբով գնաց»։ Հովիվ զճամբախ կցուցու, թագավորի տղեն կընկնա խըտ ճամբու և կէրթա։ Թագավորի տղեն թըղ էրթա ուր ճամբախ, մենք դառնանք վըր կնկան։ Կնիկն է, կփախնի կիգա ըռաստ հովվին, կառնե ուլըմ, կհանե զփոր, քաշե գլուխ ու կէրթա։ Կէրթա, կէրթա, կհասնի ուր իրկա քաղաք, կէրթա, կնստի հ՝աղբրի վրեն, մեկ լէ կտեսնա ուր իրիկ կուժ ձեռք էկավ ջուր կտանե, կէլնա զկուժ կառնե ձեռաց, կըլնա, կիտա ինք ու կըսե. «Ձիս չը՞ս էնի քըզի ծառա»։ Կըսե. «Օր դու հ՝իգաս, հ՝որի՞ չըմ էնիս»։ Կառնե տանե ուր տուն խըզմաթքար։ Օրըմ ըդ խըզմաթքար կէրթա հ՝աղբուր ջրի, կտեսնա դիեն քընիմ՝ հոգի կիգան, կիշե մեկ ուր իրիկն է՝ թագավորի տղեն, մեկ լէ վոզիրն է։ Կիգան վըր հ՝ախրըրին, խըզմաթքար ջուր կիտա ըդոնց, խմին, ըս հաղ կցուցու զուր աղի տուն, կըսե. «Գացեք ըն մարդ աղեկ է, զձըզի մըսաֆըր կառնե»։ Թագավորի տղեն կէրթա ուր աղի տուն, կնստին, կուտին, կխմին հըրի հ՝իրկուն։ Խզմաթքար մարդ կճամբըցու զմոլեն լէ կկանչե ըդտեղ։ Ըդոնք հ՝ըմեն կքոմին հ՝իրարու վրեն, կբաշլայեն խոսիլ։ Թագավորի տղեն լէ կըսե. «Օղորմի, թըղ մեկ հեքիաթ ըսե, մենք անկաճ էնինք»։ Խըզմաթքար լէ կըսե. «Ես կըսիմ, հըմա ընձի սովորութքըմ կա. եբոր հեքիաթ ըսիմ, մարդ պտի դուրս չէլնա»։ Խըզմաթքար կէլնա փակե զդուռ, զբալնիք կզըրկե գոտին, կիգա նստի ըսե հեքիաթ։

Հըդա ձըզի բալնիք, զգլխու փոսթ լէ կվերցու, կըսե.—Ես լէ հիդա մարդու կնիկն իմ,—կէրթա կնստի հ՝առջի իրկա կշտին։—Հիդա լէ թագավորի տղեն է՝ իմ մըկել իրիկ։ Հիդա լէ մոլեն է, հիդա լէ վոզիր։ Մըկա իմալ կուզեք, հըմալ դատեք։

Թագավորի տղեն կէլնա զմոլեն լէ ու զվոզիր լէ կկախե։

Հ՝առջի իրիկ լէ կըսե.—Քընի օր ես հ՝երդում էրեր իմ՝ էլ չըմ կարգվի, ես իմ սրտով զիմ կնիկ քըզի կիտամ։ Քընի օր դուք օրենքով հ՝իրարու վրա պսակվեր եք։

Թագավորի տղեն ու ըդ կնիկ կառնեն զիրար, զըդ մարդ լէ կէնին ուրանց պապու տեղ։ Թըժա դհոլ ու զուռնա կբերին, կզըրկին ու կխաղան։

Ընդոնք հասան իրանց մուրադին, դուք լէ հասնեք ձըր մուրադին։